ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» մայիսի 2021թ. ՆՄՈ/153/2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի 4-ի, «Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի 4-ի N60 և «Քարակերտի N1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի 7-ի N48 գրությունները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1) որոշմամբ հաստատված N60 հավելվածի 4-րդ կետում «ՀՀ Արմավիրի մարզ, Այգեկ համայնք, 1-ին փողոց, թիվ 1/Ա» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Այգեկ համայնք, 1-ին փողոց, թիվ 1/1» բառերով,

   2) որոշմամբ հաստատված N75 հավելվածի 4-րդ կետում «ՀՀ Արմավիրի մարզ, գ. Թաիրով Աբովյան 2» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, Թաիրով Ե. Չարենցի փողոց 2» բառերով,

3) որոշմամբ հաստատված N110 հավելվածի 4-րդ կետում <<ՀՀ Արմավիրի մարզ, գ. Քարակերտ, Թումանյան 1>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, համայնք Քարակերտ, Թումանյան փողոց 2>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

19.05.2021

VERIFIED OCSP 19.05.2021 10:47:41 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230